

ՌՈՒԲԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՐԱՄԲՅԱՆ

ԹԵՍԱՌՈՊ ԹԱՂՏՈՅԻ ԱՆՄԱՀԱԿԱՆ ԳՈՅՈՒՏԸ

412 թվականը հայ ժողովրդի պետական-հասարակական կյանքում՝ նոր դարաշրջանի սկիզբ հանդիսացավ։ Այդ նոր դարաշրջանն սկսվեց հայոց գրերի անմահական գյուտով։

Քրիստոնեությունը փրկչական թվականի առաջին տարիներից մուտք էր գործել Արևելք և գաղտնի քարոզվում էր նաև Հայաստանում։ Մինչև քրիստոնեության պաշտոնական կրոն դառնալը, այն է մինչև 301 թվականը, Հայաստանի հողը ներկվել էր հավատացյալ քարոզիչների արյունով։

Պայքարը քրիստոնեության և հեթանոսության միջև իր մոլեգնությանը հասավ Տրդատ թագավորի օրով, երբ քրիստոնեությունը պաշտոնապես ճանաչվեց և հայտարարվեց պետական կրոն։

Տրդատն իր ընտանիքով ու պալատականներով ընդունելով քրիստոնեությունը՝ հրամայեց անմիջապես քանդել հեթանոսական մեհյանները և նրանց փոխարեն եկեղեցիներ կառուցել։ Ս. Գրիգոր Լուսավորիչն ինքն անձամբ ղեկավարում էր այդ գործը։

Հեթանոսական կրոնի ներկայացուցիչները՝ քրմերը, որոնք Հայաստանում ազնվական խոշոր դաս էին կազմում և ունեին իրենց հատուկ զորամասերը, համառ կերպով դիմադրեցին քրիստոնեությանը։ Այսպես օրինակ, երբ ս. Գրիգոր Լուսավորիչը փորձեց Տարոնում գտնվող մեհյանները քանդել, քրմերը դիմադրեցին և նա առաջին պահ հարկադրված եղավ տեղի տալ և միայն երկրորդ արշավանքի ժամանակ կարողացավ նրանց ցրել և մեհյանները կործանել, սակայն հետագայում, ինչպես հաղորդում է պատմագիրը, նոր իշխանությունը հարկադրվեց քրմերին ու նրանց զավակներին «դարման ոճկաց կարգելլ» և նրանց ընդգրկել նորաբաց քրիստոնեական դպրոցներում։ Այս արդեն որոշ զիջում էր ընդդիմադրությունը կանխելու կամ չեզոքացնելու նկատառումներով։

Լուսավորչի բացած դպրոցները, որոնք պիտի ուսուցանեին քրիստոնեություն, սպասված արդյունքները չտվին, որովհետև ուսուցումն այնտեղ կատարվում էր հույն և ասորի լեզուներով, իսկ այդ լեզուները անմատչելի էին հայ ժողովրդին։

Հեթանոսական կրոնը երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդի համար հանդիսացել էր ազգային պետական կրոն, ստեղծելով ավանդություններ, տոներ և նրանց հետ կապված զանազան արարողություններ։ Հեթանոսությունը սերտորեն կապված լինելով աշխարհիկ կյանքի հետ, ժողովրդին մղում էր դեպի զգայական հաճույք՝ կեր ու խում, խրախճանքներ, զեղխ կյանք, թատրոն և այլ զվարճություններ։ Հեթանոսական այս կենսուրախությանը հակադրվում էր քրիստոնեական աշխարհամերժ կյանքը՝ իր ժուժկալությամբ, չափավորությամբ, ծոմապահությամբ, անապատների ու վանքերի ճգնավորական տքնությամբ։

Քրիստոնեությունը ուսուցանելու և տարածելու համար պահանջվում էր հայ լեզվով գրականություն, որը չկար։ Այդ բացը զգացվում էր ամենուրեք և առավելագույն չափով արտակում նոր ուսմունքի արմատավորմանը ժողովրդական լայն զանգվածների մեջ։

Քրիստոնեության վերաբերմամբ լուրջ տարաձայնություններ կային նաև վեղնախասների՝ երկրին ու եկեղեցին ղեկավարողների միջև։ Այս տարաձայնությունները հաճախ հասցնում էին սպանության։ Այսպես, Վրթանեսի որդի Հուսիկը հայոց Տիրան թագավորին՝ անվայել վարքի պատճառով թույլ չէր տալիս եկեղեցի մտնել. եկեղեցու դռները փակ էին երկրի թագավորի առաջ։ Վրթանեսի այդ վարմունքը այն աստիճան վրդովեցրեց թագավորին, որ Տիրանը Հուսիկին բրածեծ անելով սպանել տվեց։

Անհրաժեշտ միասնությունը կաթողիկոսների, թագավորների ու նախարարությունների միջև բացակայում էր։

Նախարարությունները լինելով ինքնուրույն,

իրենց ներքին կյանքով ներկայացնում էին փոքրիկ թագավորություններ. նրանք շատ հաճախ չէին ենթարկվում կենտրոնական իշխանության։ Հայոց պատմության մեջ քիչ չեն դեպքերը, երբ նրանք դավաճանորեն նետվում էին հայ ժողովրդի արտաքին թշնամիների գիրկը, կռվի գործիք դառնում նրանց ձեռքին հարազատ ժողովրդի հանդեպ։ Հայաստանի արտաքին թշնամիները նախարարների այս թույլ կողմը օգտագործելու նպատակով հովանավորում էին նրանց և խրախուսում նրանց կենտրոնախույս ձգտումները. դրանով խախտվում էր ղեկավարման միասնությունը, որ ալետաբեր հետևանքներ էր ունենում Հայաստանի համար։

Միաժամանակ Հայաստանը դարձել էր կռվախնձոր երկու մրցակից պետությունների՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև։

Արդեն գրերի գյուտի նախօրեին մրցակիցները փոխադարձ լեզու էին գտել, և Հայաստանը բաժանվել էր հույների ու պարսիկների միջև։

Այսպես էին Հայաստանի ներքին ու արտաքին պայմանները, երբ հանդես եկավ Մեսրոպ Մաշտոցը։

Հայաստանի քաղաքական ու կուլտուրական կյանքի ղեկավարությունը այդ օրերին դտնվում էր իր ժամանակի 3 խոշոր հայ գործիչների՝ Վռամշապուհի, ս. Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի ձեռքում։

Մեսրոպը ժամանակի գիտնական ու ամենահեղինակավոր անձնավորությունն էր։ Նա սովորական մարդ չէր և ոչ իսկ հասարակ մտածող։ Նա ջերմ հայրենասեր էր և ամբողջովին նվիրված իր ժողովրդին։ Լինելով Վռամշապուհ թագավորի քարտուղարը և դիվանատան պետը, նա ծանոթ էր ինչպես ներքին կյանքը կազմալուծող պատճառներին, նույնպես և արտաքին թշնամիների դավերին։

Նա քաջ գիտակցում էր, որ հայ ժողովրդի փրկության նախապայմանը նրա ազգային միասնությունն է, իսկ այդ միասնությունը կարող էր ստեղծվել միայն հայ գրի ու գրականության միջոցով։

Նա գիտեր, որ անհրաժեշտ էր վերակառուցել հայ դպրոցը, այն դարձնել հայրենասիրության օջախ և հայրենասիրության ավանդանում մկրտել նոր սերունդը։

Նա գիտեր նաև, որ գրերի գյուտով միայն հնարավոր էր արմատավորել քրիստոնեական կրոնը ժողովրդի մեջ և այս եղանակով իսպառ վերացնել հեթանոսությունը Հայաստանում։ Ու իր այս միտքը նա հայտնեց ս. Սահակին։ Ս. Սահակը խորհրդակցությունն հրավիրեց։

Գրերի գյուտին նվիրված առաջին խորհրդակցության նիստը տեղի ունեցավ արքունիքում։

Ս. Մեսրոպը հավատով ու ջերմեռանդությամբ պատմում է իր միտքը, մեկնաբանում իր ծրագիրը, կանխաբուշակում գալիքները և փրկության միջոց համարում միայն հայկական գրերը։

Ս. Սահակ կաթողիկոսը և Վռամշապուհը հափշտակված լսում են նրան, հավանություն տալիս նրա ծրագրին ու դիմում գործի։

Սակայն, ինչպես հայտնի է, նախնական փորձերը արդյունք չտվին։

Եվ ահա Մեսրոպը վերցնում է պանդխտության ցուպը և մեկնում Արևելք, գիտական կաճառների դռները բախելու։

Թե ի՞նչպիսի նշանակություն էր տալիս Մեսրոպ Մաշտոցը գրերի գյուտին, երևում է նրա՝ Վռամշապուհին ուղղած հետևյալ նախադասությունից. «Շատ ուրախ եմ այս բերի քեզ շահ, յիշատակ անմոռաց և օգուտ երկնաւոր վայելից, քան զիշխանութիւն թագաւորութեանդ քո» (Փարպեցի)։

Գրերի գյուտի անհրաժեշտության գիտակցության ու անհողդողդ վճռականության արտահայտություն կար նաև համեստ գիտնականին որդեշնող հայրենասիրությունը. «Տրտմութիւն է ինձ և անպակաս ցաւք սրտի իմոյ, վասն եղբարց իմոց և ազգականաց» ասում է Մեսրոպ Մաշտոցը։

Ս. Սահակ կաթողիկոսը և Վռամշապուհ թագավորը, որոնք, ոչ նվազ չափով քան Մեսրոպը, հետամուտ էին գրերի գյուտի աշխատանքներին, արդեն մի քանի բազմամարդ ժողովներ էին դումարել Վաղարշապատում՝ դժվարին խնդիրը լուծելու նպատակով։ Այս ժողովներին մասնակցում էին երկրի անվանի մարդիկ, իշխաններ ու նախարարներ, անվանի քահանաներ ու եպիսկոպոսներ. «Ժողովեալ էին զամենայն եպիսկոպոսունս». (Մ.Խորենացի)։

Այսպիսով գրերի գյուտի համար գործադրվող ջանքերը համազգային բնույթ էին կրում։

Մեծ գործի էր լծված նաև հայոց կաթողիկոսը՝ Սահակ Պարթևը։ Նա գիշեր ու ցերեկ ուսումնասիրում էր Ս. գիրքը, նախապատրաստում նրա մոտակա հայերեն թարգմանությունը և գործնական ու եռանդուն աջակցություն ցույց տալիս Մաշտոցին իր առօրյա աշխատանքներում։

Այս սրբազան գործով էր համակված նաև

Վռամշապուհ թագավորը։ Ինչպես հայտնի է, նա Վահրիճ իշխանին ուղարկեց Միջագետք՝ Դանիել աստուածաշունչ մուտ գտնվող նշանագրերը բերելու համար։ Ահա պատմագրի հակիրճ խոսքը այդ մասին. «Վասն որոյ յաշխարհէս մերոյ առաքեաց հրեշտակութեամբ զայր մի պատուական և հաւատարիմ փր, Խաղտնի ազգաւ, Վահրիճ անուն, յոյժ փափագեալ նորին գործոյ» (Մ. Խորենացի)։

Այդ փաստերը վկայում են, որ հայոց արքունիքը ևս նախանձախնդիր էր գրերը գտնելու գործին։

Մեսրոպը Արևելքից ձեռնունայն դարձավ։ Բայց նա չհուսահատվեց։

—Այնուամենայնիվ տառերը պիտի գտնել, —մրմնջում էր Մեսրոպը և ապավինում իր հանճարին ու Աստծուն։

Երկյուղածությամբ ու հավատով նա փարվում է Տիրոջ Խորանին, ու հոգեկան վերապրումների սրբազան ժամին նրա առաջ պատկերվում են գրերը, ինչպես գրում է պատմաբանը՝ «Երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմին»։

Տառերը գտնված էին։ Հայ ժողովրդի վերածնության և կուլտուրայի հիմնաքարը դրված էր։

Վաղարշապատը ցնծության մեջ էր։ Մայրաքաղաքը զարդարված էր արքայական դրոշակներով. ժողովուրդը ծաղկեփնջերով խմբվել էր ճանապարհներին։ Փողերի, թմբուկների և տավիղների հնչյունները, խմբական երգերը թնդացնում էին հինավուրց մայրաքաղաքը։

Վռամշապուհ թագավորը իր պալատականներով ու զորքով, ս. Սահակ Կաթողիկոսը եպիսկոպոսներով ու վարդապետներով, խաչով ու խաչվառով դուրս էին եկել Մեսրոպին դիմավորելու, նրա անմահական գյուտն ընդունելու։

Եվ ահա երևում է մեծ իմաստասեր, մեծագործ հայրենասերը։

Ցնծալից երգերի, աղմկալից կեցցեների տակ անցնում է հայ մտքի վեհափառ արքան, մեր ոսկեդարյան գրականության անկոնջ մշակ ս. Մեսրոպ Մաշտոցը։

Նա, որ ստեղծեց հայ ժողովրդի ազգային միասնությունը, հայրենասիրությամբ զինեց նրա հավաքական կամքը։

Նա, որ փրկեց մեր լեզուն և մեր կուլտուրան կորստից ու մոռացումից և բաց արեց նրանց առջև զարգացման նոր հորիզոններ։

Նա, որ կերտեց հայ Մատենագրության Ոսկեդարը, ստեղծելով ինքնուրույն թարգմանական գրականության հոյակապ բուրգեր։

Նա, որ ամրապնդեց քրիստոնեությունը, զինելով նրան եկեղեցական գրականությամբ և ազատեց ժողովրդին հեթանոսական խավարից։

Նա, որ ազգայնացնելով հայ դպրոցը և ստեղծելով դպրոցական ազգային կադրեր, առաջ մղեց ժողովրդական կրթությունը։

Նա, որ հայ ժողովրդին հաղորդակից դարձրեց ժամանակի քաղաքակրթությանը ու առաջադեմ գաղափարներին և Հայաստանի հասարակական կյանքի զարգացումը դրեց նոր, լուսավոր ուղու վրա։

Հայ գիրը հետագա դարերում հանդիսացավ հայ ժողովրդի ինքնապաշտպանության ու ազատամարտի հզորագույն զենքը և հընարավորություն ընձեռեց նրան անցնելու իր պատմական ուղին և անաղարտ պահելու իր ազգային կերպարը։

Հայ գիրը օտար հորիզոնների տակ ապաստանած հայ բեկորներին սատարեց կապվելու հայրենի օջախի հետ, պահպանելու իրենց լեզուն, մշակույթը, հայրենի սովորությունները, ստեղծելու մայրենի լեզվով գրականություն և մամուլ։

Փա՜ռք՝ հայ ժողովրդի արժանավոր զավակ՝ **Սուրբ Մեսրոպ-Մաշտոցին** և նրա անմահ գործին։